Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունների համատեքստում մշտական քննարկման առարկա են եղել մեղադրանքի փոփոխման վերաբերյալ քրեական դատավարության իրավունքի տեսությանը հայտնի բոլոր հնարավոր եղանակները՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը, դատախազի կողմից մեղադրանքի փոփոխումը քննչական գործողությունների կատարմամբ, դատախազի կողմից սեփական հայեցողությամբ մեղադրանքի փոփոխումը առանց քննչական գործողությունների կատարման, դատարանի միջնորդության հիման վրա գլխավոր դատախազի կողմից մեղադրանքի փոփոխումը դատախազի կողմից փաստական հանգամանքներով մեղադրանքի փոփոխումը միայն օրենքով նշված հստակ պայմանների առկայության դեպքում, դատախազի կողմից մեղադրանքի ազատորեն փոփոխումը իրավական գնահատականի մասով:

Քրեական դատավարության տեսության մեջ դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտը անմիջականորեն կապակցված է դատական քննության ընթացքում մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի հետ:² Միևնույն ժամանակ, դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտը անմիջականորեն կապված է նաև դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի հետ:

Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ մեղադրանքը փոխելու պատճառները տեսաբանների կողմից բաժանվում են օբյեկտիվի և սուբյեկտիվի, սակայն դրանց հստակ դասակարգում չի տրվել: Մեղադրանքը փոխելու պատճառները, եթե բաժանենք օբյեկտիվի և սուբյեկտիվի միջև կունենան հետևյալ տեսքը.

Օբյեկտիվ պատճառներ՝

1. փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարությամբ,
2. մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը նախատեսող քրեական օրենսգրքի նորմի փոփոխություն, այդ թվում

² *Գոլովկո Լ.* Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարման և դատարանում մեղադրանքի փոփոխման ինստիտուտները: Հետխորհրդային զարգացումները տեսական մոլորումների պայմաններում, Պետություն և իրավունք, N2:

նան՝ նորմի հակասահմանադրական ճանաչում:

Սուբյեկտիվ պատճառներ՝

1. փաստական հանգամանքներ, որոնք հայտնի են եղել կամ պետք է հայտնի լինեին մինչդատական վարույթում,

2. մեղադրյալին մեղսագրվող սկզբնական մեղադրանքով տրված սխալ իրավական գնահատումը:

Հարկ ենք համարում նշել, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 276-րդ և 277-րդ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ սահմանվել է երկու սկզբունքային նորամուծություն, որոնք են՝

1. կենսագործել ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ին ընդունված թիվ ՄԴՈ-710 և 2011 թվականի փետրվարի 4-ին ընդունված թիվ ՄԴՈ-934 որոշումներով անրագրված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ դատարանի վարույթում գտնվող քրեական գործի հետ կապակցված հարցերը պետք է քննարկվի բացառապես դատական նիստի ընթացքում՝ բացառելով նախկին քրեական դատավարության օրենսգրքի այն կարգավորումը, որը նախատեսում էր դատարանի վարույթում գտնվող քրեական գործով նոր քննչական գործողություններ կատարել,

2. տարանջատել մեղադրանքը փաստական հանգամանքների և իրավական գնահակատանի մասով փոխելու պայմանները, եթե անհրաժեշտ է մեղադրանքում փոփոխություն կատարել փաստական հանգամանքներով պայմանավորված, ապա հստակ սահմանել նախապայմանները:

Օրենսգրքի կարգավորումների համատեքստում, մեղադրող կողմը չունի այլևս քննչական գործողություններ կատարելու հնարավորություն այն քրեական գործով, որը գտնվում է դատարանի վարույթում: Մինևույն ժամանակ, վերացվել է նաև նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում վարույթն իրականացնող մարմնին դատարանի վարույթում գտնվող քրեական գործը վերադարձնելու հնարավորությունը³:

Ավելին՝ այն պայմաններում, երբ մեղադրանքի փոփոխությունը առաջ կրերի նոր ապացույցների ձեռքբերման անհրաժեշտություն, ապա սույն դեպքում մեղադրողի միջնորդությամբ կարող են օգտագործվել բացառապես այն դատավարական միջոցները, որոնք հասանելի են գործի դատական քննության փուլում: Նշված դատավարական միջոցներն

³ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ին ընդունված թիվ ՄԴՈ-934 որոշում:

կարող են կատարվել միայն այն դեպքում, երբ նշված միջնորդության վերաբերյալ դիրքորոշումներ են ներկայացրել դատավարության բոլոր մասնակիցներ:

Վերը նշված կարգավորումն իր մեջ ունի երկու ասպեկտ, առաջինն այն է, որ առավել բարձրացվում է դատարանի դերը, մյուս կողմից՝ մեղադրանքի կողմը փաստացի գրկվում է վերացնել նախաքննության ընթացքում թույլ տված սխալները:

Օրենսգրքի 191-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում են անձի անունը, ազգանունը, հայրանունը և նրա վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալներ, մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով, ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածը կամ հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար (արարքի իրավական գնահատականը):

Անհրաժեշտ է նշել, որ Վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ նախադեպային որոշումներով մեղադրանքի կառուցվածքի և դրա ձևակերպման վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում: Վճռաբեկ դատարանը Գրիգոր Ճաղարյանի և այլոց վերաբերյալ թիվ ԵՇԴ/0002/01/11 քրեական գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը: ...Մեղադրանքում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը»:*

Այսպիսով, մեղադրանքի փաստական կողմը այն փաստական հանգամանքների ամբողջությունն է, որոնց կապակցությամբ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, և որոնց վերաբերյալ ուղղակիորեն մատնանշված է մեղադրական եզրակացության մեջ Անդրադառնալով մեղադրանքի իրավական կողմին՝ հարկ ենք համա-

րում նշել, որ այն ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետն է, որի հանցակազմի հատկանիշներին համապատասխանում է մեղադրանքի փաստական կողմը:

Հետևաբար, մեղադրանքի փաստական կողմի փոփոխությունները կարող են դրսևորվել՝

1. ավելացնել կամ հանել հանցավոր գործունեության մասին վկայող առանձին դրվագներ,

2. ավելացնել կամ հանել մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող նոր փաստական հանգամանքներ,

3. ներառել նոր փաստական հանգամանքներ, որոնք վկայում են նախկինի համեմատ հանցագործության կատարման այլ մեղքի ձևի, շարժառիթի կամ հանգամանքների և այլնի մասին,

4. նախատեսել նոր փաստական հանգամանքներ, որոնք վկայում են այլ հանցագործության օբյեկտի կամ սուբյեկտի մասին:

Մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման փոփոխությունը դրսևորվում է.

1. փոխարինել օրենսգրքի մի հոդվածը մեկ այլ հոդվածով,

2. փոխել օրենսգրքի միևնույն հոդվածի կետերը կամ մասերը,

3. հանել քրեական օրենսգրքի հոդված(ներ)ը,

4. որակել արարքը մի քանի հոդվածներով, եթե նախկինում որակված է եղել:⁴

Օրենսգրքի 276-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքների մասով առաջին ատյանի դատարանում կարող է փոփոխվել կամ լրացվել միայն հանրային մեղադրողի կողմից, եթե հիմնական դատալսումների ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, և որոնք ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ դատաքննության ընթացքում մեղադրանքը փաստական հանգամանքների մասով կարող է փոփոխվել, եթե հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, ինչպես նաև այդ փաստական հանգամանք-

⁴ *Добровольская Т.Н.* Изменение обвинения в судебных стадиях советского процесса. М., Юрид. Лит., 1997.

ներն ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք առաջադրելը:

Անդրադառնալով նախատեսված առաջին պայմանին՝ հարկ ենք համարում նշել, որ դատարանը դատախազի կողմից ներկայացրած մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս, պետք է հաշվի առնի, թե արդյոք մեղադրանքի ծավալի վրա ազդող փաստական հանգամանքները մինչդատական վարույթում **հայտնի են եղել, թե՛ ոչ**, և արդյոք դրանք **կարող էին հայտնի լինել**:

Դատարանը պարտավոր է մերժել դատախազի կողմից ներկայացված՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը, եթե մեղադրանքի փոփոխման կամ լրացման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքները մինչդատական վարույթի ընթացքում **հայտնի են եղել** վարույթի հանրային մասնակիցներին կամ **կարող էին հայտնի լինել**:

Այսպիսով, եթե առաջ է գալիս փաստական հանգամանքների մասով մեղադրանքի փոփոխելու անհրաժեշտություն, ապա դատարանը պետք է գնահատի, թե արդյոք իրականացվել է վարույթի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, սակայն եթե ի հայտ է գալիս այնպիսի հանգամանք, որը վկայում է, որ խախտվել են այդ պահանջները, ապա դատարանը պետք է մերժի միջնորդությունը նույնիսկ այն պայմանների առկայության պարագայում, երբ նոր փաստական հանգամանքները վկայում են մեղադրյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարումը:

Փաստական հանգամանքների փոփոխությունը պետք է կապված լինի՝

1. ոտնձգության այլ օբյեկտի հետ,
2. հանցագործության այլ սուբյեկտի հետ,
3. հանցագործության կատարման այլ վայրի, ժամանակի և եղանակի հետ, եթե այն հանցակազմի հատկանիշների տեսանկյունից ունի քրեաիրավական նշանակություն,
4. հանցագործության կատարման այլ մեղքի տեսակի, նպատակի, շարժառիթների հետ, եթե վերջիններս հանցակազմի պարտադիր հատկանիշ են,
5. միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքի փոփոխման հետ (օրինակ՝ անձը մեղադրվում է սեռական կամ այլ շահագործման ձևով մարդկանց թրաֆիքինգի

ներգրավելու մեջ, սակայն դատաքննության ընթացքում հիմնավորվում է, որ շահագործման ձևը ոչ թե խոցելի վիճակի օգտագործումն է, այլ հարկադիր աշխատանքը),

6. միևնույն հանցակազմի հակաիրավական եղանակի փոփոխման հետ,

7. բլանկետային դիսպոզիցիայի բովանդակությունը կազմող օրենսդրական ակտերի փոփոխության հետ (օրինակ՝ անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի հատկանիշներով (հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի պահելը), սակայն ճիշտ չի վկայակոչվել այն օրենսդրական ակտը, որի պահանջները խախտելով՝ ամբաստանյալը տուժողին պահել է հոգեբուժական հիմնարկներում),

8. միևնույն հանցագործության այլ փուլերի կամ հանցակցության այլ տեսակի և ձևի հետ⁵:

Օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային մեղադրողն առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանում է ապացույցների վրա հիմնված իր ներքին համոզմամբ: Սույն օրենսգրքի 276-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստական հանգամանքների առկայության դեպքում հանրային մեղադրողը միջնորդում է դատարանին ժամանակ տրամադրել՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար:

Այսպիսով, եթե մեղադրող կողմը գտնում է, որ ի հայտ են եկել անհայտ հանգամանքներ, որոնք օբյեկտիվորեն չէին կարող հայտնի լինել մինչդեռ վարույթում ու ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք առաջադրելը, ապա նա պարտավոր է միջնորդել դատարանին՝ անհրաժեշտ ժամանակ տրամադրել մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու, հանրային քրեական հետապնդման նոր որոշում կայացնելու համար:

Օրենսգրքի 276-րդ մասի 3-րդ մասի համաձայն՝ մինչև վերդիկտ կայացնելու համար առաջին ատյանի դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը հանրային մեղադրողն իրավասու է փոխելու մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը:

Հոդվածի վերլուծությունից եզրահանգում ենք, որ մինչև հիմնական դատալսումների ավարտը մեղադրողը իրավասու է մեղադրյալին առաջադրված մեղադրանքի իրավական կողմը փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնել: Ի տարբերություն փաստական հանգամանքներով

⁵ Ղաւթարյան Ս. Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը: Եր., Իրավունք, 2009:

մեղադրանքի փոփոխման ռեժիմի՝ Օրենսգրքի 276-րդ մասի 3-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ չեն որևէ նախապայմանի առկայություն և դատարանի համաձայնություն: Հետևաբար, Օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը նրա նկատմամբ կիրառելի չեն:

Համաձայն օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքում հանրային մեղադրողը կազմում է նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշում, որը փոխարինում է մեղադրական եզրակացությանը և պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը տրվում է դատարանին և դատական վարույթի մասնակիցներին: Դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ողջամիտ ժամկետ է տրամադրում մեղադրյալի և նրա պաշտպանին, տուժողին, գույքային պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում, երբ դատախազը որոշում է մեղադրանքը փոփոխել կամ լրացնել, ապա պարտավոր է կազմել նոր հանրային քրեական հետապնդման որոշում, որը պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության կառուցվածքին: Մույն պարագայում, տվյալ փաստաթուղթը փոխարինելու է դատարան ուղարկված նախկին մեղադրական եզրակացությանը և սահմանելու է դատական քննության ծավալները: Մեր կարծիքով, այս պահանջի սահմանումը արդարացված է, քանի որ մեղադրական եզրակացությունն է այն իրավական փաստաթուղթը, որով սահմանվում են դատական քննության սահմանները և հնարավորություն ընձեռում մեղադրյալին արդյունավետ կազմակերպելու իր պաշտպանությունը: Այս փոփոխությամբ լուծվել է նախկին քրեական դատավարության օրենսգրքում մեղադրանքի փոփոխման ընթացակարգում առկա հակասությունները, որի պատճառով իրավակիրառ պրակտիկայում ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների միջև հաճախակի առաջանում էր հակասություն:

Անհրաժեշտ է նշել, որ նշված հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել Վճռաբեկ դատարանը Սերինե Հայրապետյանի վերաբերյալ իր թիվ ԱՎԴ/0053/01/18 քրեական գործով 2021 թվականի նոյեմբերի 26-ի այն մասին, որ. «(...) 18. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ **դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշման պատճառաբանական մասում նշվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք էականորեն տարբերվում են Ս. Հայրապետյանին առաջադրված նախորդ մեղադրանքից, սակայն դատախազի կողմից չի պահպանվել գործը քննիչին վերադարձնելու՝ ՀՀ**

քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ նշել է, որ դատախազի կողմից չի պահպանվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333-րդ հոդվածի պահանջը, այն է՝ նրա կողմից հրապարակվել է ոչ թե մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը, այլ իր՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշումից հատված: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի իմպերատիվ պահանջն այն մասին, որ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն այն ամբաստանյալի նկատմամբ և այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել, եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված մեղադրանքով դատարանում քրեական գործի քննություն չի կարող իրականացվել՝ մեղադրանք առաջադրված չլինելու և հետագա դատաքննության՝ առարկայագուրկ լինելու պատճառով: Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ հակառակ դեպքում՝ կխախտվեն Ս.Հայրապետյանի արդար դատաքննության և պաշտպանության իրավունքները: Արդյունքում Առաջին ատյանի դատարանն արձանագրել է քրեական հետապնդումը բացառող հիմքի՝ արարքում հանցակազմի բացակայության առկայությունը¹²:

20.Սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Ս. Հայրապետյանին մեղաազրված արարքի, մասնավորապես՝ դրա օբյեկտիվ կողմի փաստական հանգամանքներն էապես տարբերվում են Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 29-ին կազմած մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում տեղ գտած փաստական հանգամանքներից: Բացի այդ, Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ մեղադրանքը ոչ միայն փոփոխվել է, այլ նաև լրացվել է՝ ներառելով նաև 16 քաղաքացիներից 5.000 ՀՀ դրամի փոխարեն 3.000 ՀՀ դրամ գումարի դիմաց բժշկական եզրակացությունների տրամադրում և արդյունքում «Արտաշատ ԲԿ» ՓԲԸ-ին, ոչ թե 1.360.000 ՀՀ դրամի, այլ 1.392.000 ՀՀ դրամ գույքային վնասի պատճառումը: Ուստի, սույն որոշման 13-15.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դիրքորոշումներն առ այն, որ Դատախազը մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոփոխելու համար գործը քննիչին ուղարկելու մասին որոշում չկայացնելով և իր որոշմամբ Ս.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքը

լրացնելով ու այն փաստական հանգամանքներով էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելով, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որի հետևանքով Ս. Հայրապետյանին պատշաճ դատավարական ընթացակարգով մեղադրանք չի առաջադրվել՝ խախտելով վերջինիս պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները (...)»:

Հարկ ենք համարում նշել, որ Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համատեքստում դատախազը Ս.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքը լրացնելիս առաջին հերթին պետք է համապատասխան ցուցումներ տալով գործը վերադարձներ վարույթն իրականացնող մարմնին՝ մեղադրանքը փոփոխելու և լրացնելու նպատակով: Այնուհետև դրա հիման վրա վարույթն իրականացնող մարմինը պետք է կազմեր նոր մեղադրական եզրակացություն և ուղարկեր դատարան: Գտնում ենք, որ այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանի որոշման արդյունքում ձևավորած կայուն նախադեպային իրավունքը իսպառ կբացառի անձի պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտումները և կապահովի օրենքի միատեսակ կիրառությունը:

Անդրադառնալով միջազգային փորձին՝ հարկ ենք համարում նշել, որ ԱՄՆ շատ նահանգների քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված է, որ դատարանը կարող է թույլ տալ մեղադրանքը փոխել նաև, եթե հայտնաբերվում են թերություններ մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում՝ հանցագործության, ցանկացած անձի, գույքի կամ ժամի նկարագրության մեջ, եթե այդ փոփոխությունները չեն հանգեցնում լրացուցիչ կամ այլ հանցանքի մեջ անձին մեղադրելուն⁶:

Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Վերջինիա նահանգի Կոդ 19.2-231 թույլ է տալիս մեղադրանքը փոխել երկու դեպքում՝

1. երբ կա մեղադրանքի ձևին վերաբերող թերություն,
2. երբ կա ներկայացված մեղադրանքի և ապացույցների միջև անհամապատասխանելիություն:

Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեղադրանքի այսպիսի փոփոխությունը չպետք է հանգեցնի մեղադրանքի էության և բնույթի փոխախման⁷:

⁶ St' u sost. В.И. Лафитский / под ред. и со вступ. ст. О.А. Жидкова // Соединенные штаты Америки: Конституция и законодательные акты: пер. с англ. / М., 1993. С. 748.

⁷ St' u Virginia Code Title 19.2 Criminal Procedure Code, article 231.

Այսպիսով, կատարված օրենսդրական նորամուծությունների վերլուծությունից բխում է, որ՝

1. քրեադատավարական նոր փոփոխությունները ամրացնում են կարևորագույն սկզբունքներից մեկը՝ կողմերի իրավահավաստության սկզբունքը: Այսուհետ մեղադրողի կողմից ենթադրյալ հանցանք կատարած անձի արարքին իրավական որակումն կորցնում է իր նշանակությունը, և դատարանն էլ կաշկանված չէ դրանով, որպիսի պայմաններում օրենքի կիրառման և մեկնաբանման վերաբերյալ մեղադրող կողմից դիտարկումները չունեն առավելություն հակառակ կողմի դիրքորոշումների համեմատ,

2. մեղադրող կողմը այսուհետ զրկված է վերացնել մինչդատական վարույթի ընթացքում կատարված սխալները՝ մեղադրանքը փոփոխելու միջոցով: Այս կարգավորման ամրագրումից բխում է, որ բարձրացվում է դատախազի պատասխանատվությունը նախնական քննության նկատմամբ հսկողություն իրականացնելիս,

3. դատական քննության սահմանները կարող են փոփոխվել, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայնտի չէին և չէին էլ կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և որոնք հանգեցնում մեղադրյալին առաջադրված մեղադրանքի փոփոխության: Եթե առկա չեն վերը նշված հանգամանքներից որևիցե մեկը, ապա դատարանի վարույթում գտնվող մեղադրական եզակացությամբ սահմանված դատական քննության շրջանակները չեն կարող և չպետք է փոփոխվեն կամ լրացվեն,

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ են համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով մուտք գործեց դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման վերաբերյալ միջազգային ստանդարտներին և առավել ժամանակակից նոր մոդելերին համապատասխան ինստիտուտ, որը հետխորհրդային ժամանակներից դեռ փոփոխությունների չէր ենթարկվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ-իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունված 2003 թվականի մայիսի 18-ին, ուժը կորցրած՝ 2022 թվականի հուլիսի 1-ին):
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունված 2022 թվականի հուլիսի 1-ին):
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 2022 թվականի հուլիսի 1-ին):
4. ՀՀ վճռաբեկ դատարան, 2012 թվականի օգոստոսի 24, գործ թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշում:

5. ՀՀ վճռաբեկ դատարան, 2021 թվականի նոյեմբերի 26, գործ թիվ ԱՎԴ/0053/01/18 որոշում:
6. ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ին ընդունված թիվ ՄԴՌ-710 որոշում:
7. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ին ընդունված թիվ ՄԴՌ-934 որոշում:
8. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ին ընդունված թիվ ՄԴՌ-934:
9. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ին ընդունված թիվ ՄԴՌ-934 որոշում:
10. Virginia Code Title 19.2 Criminal Procedure Code, article 231.

Տեսական գրականություն

1. Հեղինակային խումբ: Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան «Հայաստանի Հանրապետության Քրեական Դատավարություն»: Մաս 2», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2017:
2. Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան «Հայաստանի Հանրապետության Քրեական Դատավարություն»: Մաս 3, Հեղինակային խումբ: Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2017:
3. Հեղինակային խումբ: Գիտական խմբագիր՝ Ա. Ղամբարյան «Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը», Եր., «Իրավունք» 2009:
4. *Գողովկո Լ.*, Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարման և դատարանում մեղադրանքի փոփոխման ինստիտուտները: Հետխորհրդային զարգացումները տեսական մոլորումների պայմաններում // «Պետություն և իրավունք», N 2:
5. Соединенные штаты Америки: Конституция и законодательные акты: пер. с англ. Сост. В.И. Лафитский / под ред. и со вступ. ст. О.А. Жидкова. М., 1993.
6. *Добровольская Т.Н.* Изменение обвинения в судебных стадиях советского процесса. М., Юрид. Лит., 1997.

Ինտերնետային աղբյուրներ

1. www.arlis.com
2. www.datalex.com

ОСНОВЫ ИНСТИТУТА ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ В СУДЕ В СВЕТЕ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РА

С.С. Юзбашян, Г. Галстян

*Российско-Армянский (Славянский) университет
Институт права и политики (ИПП)*

АННОТАЦИЯ

В рамках научного исследования предметом исследования стали особенности института изменения обвинения в ходе судебного разбирательства и проблемы, возникшие в результате применения этого института, а также была предпринята попытка предложить эффективные механизмы их решения.

Ключевые слова: обвинение, судебный процесс, подсудимый, обвинитель, обвинительный акт.

**THE FUNDAMENTALS OF THE INSTITUTE TO CHANGE THE
CHARGE DURING THE TRIAL UNDER THE LIGHT OF THE
NEW RA CRIMINAL PROCEDURE CODE**

*S. Yuzbashyan, G. Galstyn
Russian-Armenian (Slavonic) University
Institute of Law and Politics (ILP)*

ABSTRACT

Within the framework of the scientific research, the features of the institution of changing the charge during the trial and the problems caused by the application of this institution were the subject of study, as well as an attempt was made to propose effective mechanisms for their solution. At the same time, a combination was made with the results of the study of international experience.

Keywords: Accusation, trial, defendant, accuser, indictment.

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Ս. Յուզբաշյան, Հ. Մարտիկյան

*Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան
Իրավունքի և քաղաքականության ինստիտուտ (ԻՔԻ)*

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտական հոդվածի շրջանակներում հեղինակների կողմից իրավահամեմատական վերլուծության են ենթարկվել տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի որոշ հիմնահարցեր Հայաստանի Հանրապետությունում քրեաիրավական բարեփոխումների և որակապես նոր քրեական օրենսգրքի ընդունման համատեքստում:

Հիմնաբառեր՝ հաշտություն, մասնավոր մեղադրանք, քրեական պատասխանատվությունից ազատել:

Քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի¹ համաձայն՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության: Միննույն ժամանակ, ելնելով մարդասիրության և արդարության սկզբունքներից քրեական օրենքը նախատեսում է քրեական պատասխանատվությունից ազատելու մի քանի տեսակներ. տրամաբանությունն այն է, որ ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելը և պատժելը:

Այսպես, քրեական պատասխանատվությունից ազատելը պետական իրավասու մարմնի որոշումն է կոնկրետ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարած անձի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց չկիրառելու մասին [1]:

Հարկ է նկատել, որ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է հանդիսանում հանցանքի և այն կատարած անձի ոչ բարձր հասարակական վտագավորությունը: 2022 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է նախատեսում տուժողի և հանցանք

¹ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով թեև առանձին ամրագրում չեն ստացել մարդասիրության, քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքները, սակայն դրանց որպես ընդհանուր իրավական սկզբունքների կիրառելիությունը չի բացառվել:

կատարած անձի հետ հաշտությունը, որը բովանդակային առումով համընկնում է 2003 թվականի խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածին: Հոդվածում քննարկման առարկա կդարձվեն տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի որոշ հիմնահարցեր:

Նախ, քրեական պատասխանատվությունից ազատելու տվյալ ինստիտուտի համար կարևոր նշանակություն ունի դատավարական կողմը: Քրեական իրավունքի նորմը կարող է կյանքի կոչվել քրեադատավարական իրավունքի նորմերի միջոցով, որոնց հիման վրա հստակեցվում է գործողությունների միանգամայն որոշակի հաջորդականությունը: Քրեական դատավարության շնորհիվ քրեական իրավունքի նորմերը գործողության մեջ են դրվում, իրացվում են օբյեկտիվ իրականության մեջ, ուստի այստեղ գործ ունենք համալիր՝ քրեադատավարական և քրեաիրավական ինստիտուտի հետ: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը տուժողի հետ հաշտվելը թեև ուղղակիորեն չի նախատեսել որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանք, սակայն փոխարենը, ամրագրվել է, որ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից: Այսինքն, քննարկող ինստիտուտը գործող իրավակարգավորումների պայմաններում հիմնվում է ինչպես դատավարական, այնպես էլ նյութական նորմերի հիման վրա:

Երկրորդ, ՀՀ գործող քրեական օրենսգիրքն ընդլայնել է քննարկվող հիմքի կիրառման շրջանակը՝ դրանում ներառելով անորոշ թվով ոչ մեծ ու միջին ծանրության հանցագործություններ: Այսինքն՝ այստեղ քրեական օրենքի ընդգրկումն անհամեմատ լայն է: Թեև հանցագործությունների շրջանակի ընդլայնումը հանգեցնելու է հաշտության ինստիտուտի կիրառման հնարավորությունների ընդլայնմանը, միևնույն ժամանակ, խթանելու է հանցանք կատարած անձանց կողմից հանցագործության հետևանքով պատճառված վնասի կամովին հատուցմանը, սակայն տուժողների և հանցանք կատարած անձանց հաշտության համատեքստում վերջինների ակնկալիքները պարունակում են որոշակի ռիսկեր: Այսպես, քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս առաջին հերթին հաշվի է առնվում կատարված հանցանքի հասարակական վտանգավորության աստիճանը և բնույթը: Միջին ծանրության հանցանքներ են համարվում քրեական օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար նույն օրենսգրքի հատուկ մասով նախատես-

ված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը:

Հանցագործությունն ինքնին հասարակական մեծ վտանգ է ներկայացնում, ուստի այն խախտում է ոչ միայն կոնկրետ անձի իրավունքները, այլև հասարակության և պետության շահերը, որոնք շահագրգռված են պահպանելու իրավակարգը, որը կայունության երաշխիքներից է: Այս առումով կատարված հանցագործության հետևանքով առաջացած քրեական վեճի լուծումը ևս բխում է ոչ միայն հանցագործությունից տուժած անձի, այլև պետության ու հասարակության շահերից: Պետությունն ու հասարակությունը շահագրգիռ են խախտված իրավակարգը վերականգնելու հարցում: Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ արդարադատություն իրականացնելու համար կարևոր են ոչ թե երկու, այլ երեք կողմերի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը պահպանելը, որտեղ երրորդ կողմը պետությունն է: Ընդ որում, պետությունն ու հասարակությունը շահագրգռված են այն բանում, որ հաշտեցումը լինի իրական, քանի որ միայն այդ դեպքում կարելի է խոսել իրավակարգի վերականգնումը երաշխավորելու մասին: Հաշտեցման հանրային բնույթը պայմանավորված է նաև այն բանով, որ օրենսդիրը, տվյալ ինստիտուտը ներդնելով, ձգտում է հասնել հանրային շահը բավարարելուն՝ ջանալով խրախուսել հանցանք գործած անձանց՝ կատարել գործողություններ, որոնք նվազեցնում են նրանց հասարակական վտանգավորությունը և կանխում նոր հանցագործությունները: Այս ինստիտուտի հանրային բնույթը դրսևորվում է այն բանում, որ այն դառնում է պետության քրեական քաղաքականության բաղադրատարրը՝ ուղղված հանցավորության մակարդակը նվազեցնելուն [2]:

Արդյունքում, սանկցիայով նախատեսված խիստ պատժաչափը կարող է կանխորոշել այն, որ հանցանք կատարած անձինք հաշտության եղանակով քրեաիրավական վեճի լուծման միջոցով խուսափեն քրեական պատասխանատվությունից: Նման պայմաններում, հարցը առավել խիստ պատժողական քաղաքականությանը նախապատվությունը տալը չէ, այլ այն, որ կստեղծվի մի իրավիճակ երբ պատժի նպատակները չեն իրացվի, ուստի հանցանք կատարած անձի նկատմամբ դրսևորած մարդասիրությունը, փաստորեն, արդյունավետ չի լինի, քանի որ հաշտության և քրեական պատասխանատվության ենթարկվելու դիլեմմայի առջև կանգնած հանցանք կատարած անձը կնախընտրի բոլոր հնարավոր միջոցներով տուժողի հետ հաշտությունը: Այստեղ տեղին են Չ.Բեկարիայի այն խոսքերը, որ հանցագործությունը կանխելու առավել արդյունավետ միջոցը ոչ թե պատժի խստությունն է այլ անխուսափե-

լիությունը: Քրեական օրենքը թեև պատասխանատվությունից ազատելը չի կապում պատժի նպատակների հետ, սակայն այն չպետք է հակասի պատժի նպատակներին՝ սոցիալական արդարությունը վերականգմանը, պատժի ենթարկված անձին վերասոցիալականացմանը և հանցագործությունների կանխմանը:

Քննարկվող պայմաններում ճիշտ կլինի, որ պետությունը սահմանի հաշտեցման ընթացակարգերը, որոնք կապահովեն հանցանք կատարած անձի և տուժողի փոխադարձ համաձայնության իրական լինելը:

Բացի այդ, քննարկվող հիմքի բացառիկությունը կայանում է նրանում, որ քրեական պատասխանատվությունից ազատելու մյուս հիմքերի պայմաններում տուժողի կարծիքը հաշվի չի առնվում: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի շրջանակում քրեական պատասխանատվությունից անձին ազատելու հարցը լուծելու համար տուժողի կարծիքը կարևոր է, քանի որ հենց նա է որոշում՝ հաշտվի՞ հանցանք գործելու մեջ մեղավոր անձի հետ, թե՞ ոչ: Այսինքն՝ հաշտեցումը դիտարկվում է որպես տուժողի մասնակցության ձև մեղավոր անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծմանը:

Այս առումով հարկ է նշել քրեական իրավունքում տուժողի հետ հաշտվելիս քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հարազատությունը քրեական դատավարությունում մասնավոր հետապնդման ինստիտուտի հետ [3]: Մասնավոր հետապնդումը ենթադրում է, որ քրեական հետապնդում հարուցվում է միայն տուժողի դիմումի հիման վրա և դադարեցվում է տուժողի հետ հաշտության հասնելու դեպքում: Տուժողի կամքն այստեղ պայմանավորում է քրեական հետապնդման ընթացքը [4]:

Այսպիսով, օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի հաշտության դեպքում իրավակիրատ մարմինը պարտավոր է կարճել քրեական գործով վարույթը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի հաշտվելու դեպքում կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դադարեցնելով քրեական հետապնդումը և կարճելով քրեական գործի վարույթը:

ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է նյութափրավական բնույթ ունեցող քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերից՝ տուժողի հետ հաշտվելու կիրառման առանձնահատկություններին, արձանագրելով, որ այն կիրառվում է միայն հանրային հետապնդման գործերով [5]:

2003 թվականի խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդ-

վածով նախատեսված պահանջների առկայությունն ինքին անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք չէր դիտարկվում, այդ պահանջների առկայության դեպքում վարույթն իրականանցնող մարմինը քննարկում էր անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը և օժտված էր հայեցողական լիազորությամբ: Մինչդեռ 2022 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքով տուժողի հետ հաշտվելու հիմքը իմպերատիվ է և, ի թիվս հողվածով նախատեսված մյուս պահանջների, տուժողի կամահայտնությամբ պայմանանավորված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է:

Այս ամենից ելնելով՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի հիմքը փոխադարձ համաձայնության իրավահարաբերություններն են, որոնց առկայության պայմաններում հնարավոր է լուծել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության հարցը:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է «առաջին անգամ հանցանք կատարելու» պայման: ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն առաջին անգամ հանցանք կատարած է համարվում այն անձ, որը նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը սույն օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է: ՀՀ քրեական գործող օրենսգրքի 82-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է նաև նախկինում նույն հողվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձի համար նույն հիմքով կրկին քրեական պատասխանատվությունից ազատվելու արգելք:

Այս առումով խնդրահարույց է այն, որ հանցանք կատարած անձի և տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը չի կարող կիրառվել նախկինում նույն ինստիտուտի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատված անձի նկատմամբ, հաշվի առնելով, որ անձն այլևս չի կարող համարվել առաջին անգամ հանցանք կատարած: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ առանց օրենքով սահմանված կարգով օրինական ուժի մեջ մտած դատավճռի անձը չի կարող համարվել հանցանք կատարած, ուստի նման արգելքի նախատեսումը թեև տրամաբանական է և չեզոքացնում է հանցանք կատարած անձանց կողմից հաշտության միջոցով քրեական պատասխանատվությունից խուսափելու ռիսկերը, սակայն չի սպառում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառման իրավական ակնկալիքը: Ավելին, ՀՀ վճռաբեկ

դատարանը իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ եթե պատիժը կրելուց հետո անձը դրսևորել է անբասիր վարքագիծ, և նրա դատվածությունը մարվել է կամ դատարանի համապատասխան որոշմամբ հանվել է, ապա նա քրեական օրենքի տեսանկյունից համարվում է նախկինում հանցագործություն չկատարած [3]: Այլ կերպ, եթե պատժի ենթարկված և դատվածությունը մարված անձը, որպես նախկինում հանցանք չկատարած, իրավունք ունի հետագայում կատարված հանցանքի համար տուժողի հետ հաշտվելու կամ ցանկացած այլ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից, ապա անվիճելի է, որ պատժի չենթարկված անձը ևս պետք է նման ակնկալիք ունենա [7]:

Վերոգրյալից կարող ենք եզրահանգել, որ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու բնույթն այն է, որ հնարավոր լինի հասնել պատժի նպատակներին առանց այն կիրառելու: Ընդ որում, պետությունը ձեռք է բերում ոչ միայն արդարադատության իրեն ցանկալի արդյունքը, այլև ստեղծում է դատավարական խնայողության հնարավորություններ, միջոցների տնտեսում, որոնք այլ պարագայում պետք է ուղղվեին պատիժն ի կատար ածելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) Ս.Առաքելյան, Ա.Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ. 463, 464:
2. *Сидоренко Э.Л.* Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: в поисках уголовно-политического начала // «Мировой судья», 2015, № 11, СС. 26–31:
3. *Майорова Л.В.* Понятие примирения в уголовном процессе // Медиация в условиях кризиса: теоретический и практический аспекты: материалы региональной научно-практической конференции (г. Красноярск, 26 марта 2010г.). Красноярск, 2010, СС. 53–56.
4. *Стойко Н.Г.* Стратегия примирения и медиация в уголовном процессе, СС. 77–78.
5. Ս. Առաքելյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.03.2016 թվականի թիվ ԵԱԲԴ/0217/01/14 որոշումը:
6. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արտաշ Շաքարյանի գործով 15.08.2014 թվականի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշում, կետ 14:
7. Актуальные проблемы уголовного законодательства и правоприменительной практики стран-участниц СНГ: Сборник научных трудов международной научно-практической конференции // Ер.: РАУ, 2022. СС. 223–224.

**ПРИМИРЕНИЕ СТОРОН В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ КАК
СПОСОБ РАЗРЕШЕНИЯ КРИМИНАЛЬНОГО КОНФЛИКТА**

С. Юзбашян, А. Мартикян

*Российско-Армянский (Славянский) университет
Институт права и политики (ИПП)*

АННОТАЦИЯ

В свете проведенной в Республике Армения уголовно-правовой реформы и принятия качественно нового уголовного кодекса в настоящей статье проведен анализ концептуальных изменений, касающихся института освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим.

Ключевые слова: медиация, частное обвинение, освобождения от уголовной ответственности.

**RECONCILIATION WITH THE VICTIM AS A MEAN OF
SOLVING CRIMINAL DISPUTES**

S. Yuzbashyan, H. Martikyan

*Russian-Armenian (Slavonic) University
Institute of Law and Politics (ILP)*

ABSTRACT

The article is devoted to the analysis of some issues of the institute of exemption from criminal liability in connection with reconciliation with the victim. In the light of the criminal law reform carried out in the Republic of Armenia and the adoption of a qualitatively new Criminal Code, this article analyzes the conceptual changes.

Keywords: mediation, private prosecution, exemption from criminal liability, criminal-law disputes.

ТЕОРИЯ ПРАВА И КОНСТИТУЦИОННОГО ПРАВА

РОЛЬ СРЕДСТВ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ В ФОРМИРОВАНИИ ОБЩЕСТВЕННОГО МНЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО СУДЕБНОЙ ВЛАСТИ

Л.А. Александян

*Российско-Армянский (Славянский) университет
Институт Права и Политики (ИПП)
aleksanyan.lucy1738@gmail.com*

АННОТАЦИЯ

В данной статье речь идет о том, что СМИ играют важнейшую роль в осуществляемом посредством общественного мнения демократическом контроле. Хотя и идеальная концепция деятельности СМИ предполагает, что она должна осуществляться беспристрастно, объективно, однако в реальности наблюдается некая «политизация» СМИ и их представителей. Они играют ключевую роль в формировании общественного сознания, являются фактором, влияющим на авторитет судебной власти. Влияние средств массовой информации может отразиться не просто на отношении к судебной власти, но также на отношении к будущим судебным решениям. Это – одна из причин, по которой крайне важно изучить роль СМИ при формировании общественного мнения относительно судебной власти. Будучи гарантом справедливости, судебная власть должна пользоваться общественным доверием для успешного выполнения своих функций.

Придавая особую важность и отмечая важную роль СМИ в формировании общественного мнения относительно судебной власти, нужно отметить, что крайне необходим ответственный подход представителя СМИ к распространяемым им посредством массовой информации материалам относительно судебной власти и ее представителей, что может поставить под угрозу и сомнение независимость суда, а также эффективность осуществляемого правосудия.

Ключевые слова: авторитет судебной власти, общественное мнение, СМИ, свобода слова.

Понятие «общественное мнение», не будучи юридической категорией, не имеет строго определенной формулировки. В научной литературе можно встретить различные трактовки данного понятия. Так, В.Н. Лавриненко определяет общественное мнение как «отношение социальных общностей к проблемам общественной жизни, проявляющееся сначала в эмоциях и суж-

дениях, а затем и в действиях»¹. А.Н. Елсуков же определяет общественное мнение как «специфическое проявление общественного сознания, оно является сложным духовным образованием: общественное мнение выражается в оценках (как в вербальной, так и в невербальной форме) и характеризует явное или скрытое отношение к актуальным проблемам действительности, может быть присуще отдельным группам, социальным общностям или обществу в целом»².

Считаем, что наиболее всеобъемлющим является следующее определение общественного мнения, согласно которому оно есть состояние массового сознания, в котором выражается отношение (скрытое или явное) различных совокупностей людей, именуемых «общественностью», к явлениям, событиям и фактам социальной действительности, затрагивающим их потребности и интересы. В обыденном употреблении понятие «общественное мнение» чаще всего подразумевает точку зрения общества по тому или иному общественно значимому вопросу³.

Общественное мнение возникает по наиболее спорным вопросам политической, экономической и духовной жизни общества, в основе которого лежит общность интересов преобладающего большинства общества.

Важную роль при формировании общественного мнения играют СМИ, посредством которых общество получает доступ к информации о происходящих в стране событиях, о порядке дел в органах власти и процессе разрешения наиболее остро стоящих в данном обществе вопросов. Общественное мнение напрямую зависит от СМИ: они играют ключевую роль в формировании общественного сознания, являясь фактором, влияющим на уровень легитимности власти. При этом следует особо выделить, что общественное мнение граждан может подвергаться, да и подвергается, различным манипуляциям со стороны представителей СМИ. Причины подобной манипуляции могут быть различными и, как правило, носят субъективный характер. Зачастую подобные манипуляции осуществляются с целью привлечения внимания общества, «раскрутки» преподнесенной ими информации и, почему бы и нет,

¹ Гавра Д.П. Общественное мнение как социологическая категория и социальный институт. СПб.: ИСЭП РАН, 1995. С. 65.

² История социологии: Учеб. Пособие / А.Н. Елсуков, Г.Н. Соколова, Т.Г. Румянцева, А.А. Грицанов; Под общ. ред. А.Н. Елсукова и др. 2-е изд., перераб. и доп. Мн.: Выш. шк., 1997. 381с. ISBN 985-06-0270-8. С. 38.

³ Грушин Б.А., Горшков М.К., Голдберг Ф.Н. Общественное мнение / Гуманитарный портал: Концепты [Эл. ресурс] // Центр гуманитарных технологий, 2002–2021 (последняя редакция: 16.11.2021). URL: <https://gtmarket.ru/concepts/7106>. Последняя дата обращения: 11.04.22г.

политизации СМИ. Так, в качестве мотива манипуляций могут служить также политические взгляды представителя СМИ, который преподносит информацию со своим субъективным анализом конкретного события.

Обладая способностью в формировании общественного мнения, СМИ часто воспринимаются как четвертая ветвь власти. Этот термин был придуман британским историком и философом Томасом Карлайлом и объясняется так: СМИ оказывают мощнейшее влияние на социум, что, в свою очередь, играет одну из определяющих ролей в выработке гражданами общественного мнения и становлении их интересов. Простому человеку крайне трудно ориентироваться в обширном объеме поступающей информации, поэтому он не всегда имеет возможность удостовериться в правдивости полученных им сведений⁴. Именно поэтому государственные и иные заинтересованные органы используют СМИ для донесения информации до аудитории с целью воздействия на их поведение. Как правильно подметила в своей работе Е. Старынина: «Сегодня СМИ как никогда подконтрольны государству и во многом подменяют функции общественного мнения. Об их неравном демократическом статусе говорит и то, что если влияние масс-медиа на общественное мнение колоссально, то общественное мнение еще не способно влиять на СМИ»⁵.

Таким образом, современные средства массовой информации являются мощным и решающим связующим звеном между институтами публичной власти и широкой общественностью.

Одним из наиболее часто повторяющихся мощных медиа-навыков с течением времени является способность определять повестку дня. Другими словами, способность говорить людям о том, что они думают, и, следовательно, регулировать внимание к выбранным темам. СМИ оказывают существенное влияние на содержание общественной повестки дня – заимствуя классическую фразу Уолтера Липпмана «картинки в наших головах», – а повестка дня вопросов или других объектов, представленных средствами массовой информации, влияет на то, о чем и есть картинки в наших головах⁶.

СМИ в некоторой степени можно назвать «орудием» осуществления контроля за деятельностью властей. Хоть и идеальная концепция деятельности представителя СМИ предполагает, что она должна осуществляться беспристрастно, объективно, однако в реальности можно наблюдать за некой

⁴ Ольшевский Д.В. Психология масс / Д.В. Ольшевский. СПб.: Питер, 2002. С. 368.

⁵ Старынина Е. Общественное мнение как показатель легитимности власти // «Власть», № 7. 2011.

⁶ Maxwell McCombs, *Setting the Agenda: Mass Media and Public Opinion* (John Wiley & Sons 2014).

«политизацией» СМИ и их представителей. Тенденции «политизации» СМИ искажают, деформируют сущность преподносимой им информации. Данная информация уже не может являться объективной, она непременно на себе будет нести «политическую тень», что не дает возможности простому беспристрастному заинтересованному лицу ориентироваться в истинности преподносимой информации. Естественно, что среднестатистический гражданин не будет вести свое собственное «расследование» с целью выявления истинности прочтенной им информации, и, соответственно, у него сформируется искаженное представление о предмете обсуждения.

В дополнение к влиянию средств массовой информации следует отметить, что недавние исследования показали, что средства массовой информации влияют также на отношение к будущим судебным решениям, по крайней мере, в некоторых случаях. Также было показано, что ключ к убеждению общественности конкретным судебным решением на самом деле заключается в том, как средства массовой информации контекстуализируют и освещают тему («контекстуализация»)⁷. Это – одна из причин, по которой крайне важно изучить роль СМИ при формировании общественного мнения относительно судебной власти и, соответственно, при обеспечении авторитета судебной власти.

Особенность человеческой психики такова, что человек гораздо легче воспринимает информацию, преподнесенную ему в качестве развлечения. Например, недавно в Сети начали распространяться материалы относительно политизированности судьи Д. Аргаманяна, в связи с чем адвокаты судьи Бориса Бахшияна, ссылаясь на публикации относительно Д. Аргаманяна и его политические взгляды, представили второе ходатайство о самоотводе последнего, однако тот отказался заявить самоотвод. После того, как судьей было вынесено решение о применении ареста в качестве меры пресечения в отношении судьи Бориса Бахшияна, в Сети начали проходить массовые акции в поддержку Бориса Бахшияна не только на уровне юридической общности, но и просто граждан. Через СМИ стали всплывать старые записи политического характера Давида Аргаманяна, когда тот еще занимал пост советника партии «Мой шаг», особое распространение получило видео, где он во время «Бархатной революции» барабанил для общего поднятия духа протестующих, тем самым получив прозвище «барабанщик» и став предметом насмешек со стороны общества. Очевидно, что усилия представителей СМИ,

⁷ Rosalee A Clawson and Eric N Waltenburg, 'Support For A Supreme Court Affirmative Action Decision, A Story in Black and White' (2003) 31 American Politics Research 251.

направленные на «добычу» подобных материалов из архивов, были очередной попыткой «накала страстей» вокруг судебной власти. Распространение через СМИ подобного рода сведений вызвали бурную реакцию у общества, стали предметом критики и обсуждений относительно политизации не только Давида Аргаманяна, но и всей судебной системы. Без сомнений, подобное отношение со стороны общества имеет основание, ибо, как правило, граждане составляют представления о судебной системе посредством оценки поведения (при этом, чаще непрофессионального, нежели профессионального) отдельного судьи. То, как судья представляет себя обществу, то, какой моральный облик он создает в глазах общества и есть ключевой критерий определения легитимности судебной власти. Если поведение судьи в глазах общества не соответствует статусу судьи, унижает авторитет судебной власти, вызывает общественное недоверие, неодобрение и порицание, то говорить о легитимности судебной власти не имеет смысла. Однако следует учитывать, что говорить о легитимности судебной власти несколько сложнее, ибо деятельность судов осуществляется исключительно на профессиональной основе, и, естественно, что граждане (особенно при критически низком уровне правосознания) не в состоянии дать адекватную, объективную оценку деятельности суда. Граждане могут лишь судить о судебной системе посредством преподнесенной им через СМИ информации, которая, как уже было отмечено, имеет манипуляторный характер.

С учетом вышесказанного, можно констатировать, что в результате бесконтрольного освещения СМИ информации о судьях и судебной системе у общества правомерно может сформироваться обоснованное впечатление о том, что если судья проявляет недолжное поведение вообще, то он аналогичное поведение может проявить и при выполнении им своих профессиональных обязанностей. Подобное сформированное общественное мнение в отношении конкретного судьи непременно приведет к снижению авторитета судебной власти.

Европейский Суд по правам человека в деле *Morice v. France* напомнил, что выражение «авторитет судебной власти» включает в себя, в частности, понятие того, что суды являются надлежащей площадкой для разрешения споров о праве, а также понимание того, что общество, в целом, с уважением относится к судам и уверено в их возможности выполнять указанную функцию. А в деле *De Haes and Gijssels v. Belgium*, помимо прочего, отметил, что «суды – гаранты правосудия, их роль является ключевой в государстве, основанном на верховенстве закона, и они должны пользоваться доверием общественности. Следовательно, суды должны быть защищены от необоснованных нападок, особенно имея в

виду то обстоятельство, что на судьях лежит обязанность проявлять осторожность, которая препятствует им отвечать на критику».

Реализуемый в настоящее время механизм очевидно малоэффективен, поскольку не учитывает природу и особенности формирования идентичности, сориентирован на трансляцию продекларированных и представленных в максимально общем виде базовых национальных ценностей. Отдельной статьи заслуживает вопрос, готовы ли педагоги, в том числе и высшей школы, к организации такой деятельности [3]. Об этом свидетельствуют и результаты анализа массовой практики (школьные сайты), которую мы проводим в течение более десяти лет: разработка образовательными учреждениями первоначально программ духовно-нравственного развития, воспитания обучающихся на ступени начального общего образования и программ воспитания и социализации образовательного учреждения, как составляющих Основной образовательной программы образовательного учреждения, а в настоящее время Рабочих программ воспитания также в структуре ООП образовательной организации, сводится к незначительной детализации примерных программ. Проблема носит объективный и общий характер: для отечественного менеджмента в системе образования все, что относится к управлению формированием идентичности (будь то личностная идентичность или групповая), относится к слабо обоснованным и разработанным практикам.

Учитывая вышесказанное, определимся в отдельных исходных положениях в реализации политики идентичности в системе образовании в целях

позитивного формирования российской (гражданской) идентичности, в том числе для минимизации возможных конфликтогенных ситуаций этнического содержания, в системе образования:

1. Политика идентичности начинается с признания следующего объективного диалектического противоречия: сосуществования разнообразия субъектов, составляющих социальную общность, и дифференциации социума на группы. Полагаем, что в качестве критериев для подобной дифференциации можно назвать следующие: *позиция в образовательном процессе* (педагоги и обучающиеся; активные, «болото» и пассивные; реальные и номинальные члены общешкольного сообщества и т.п.); *возраст* (взрослые, старшекласники, подростки, младшие школьники); *позиция по отношению к школьным правилам и нормам* (последователи, сочувствующие, оппозиционеры) и т.п. При этом вполне вероятно, что в выделенных или складывающихся общностях (в том числе детско-взрослых общностей) (в понимании И.Ю. Шустовой) возможны разнонаправленные процессы (консолидации, укрепление групповой установки, расширение зон референтности, или наоборот), которые в качестве необходимого в реализации педагогической работы в логике политике идентичности затребуют содействие обучению школьников осознанного выбора и референтных предпочтений, мягкое влияние на выбор, повышение референтного индекса основных общностей (общешкольного сообщества как максимум; класса, групп общения в школе, отдельных педагогов и школьников и т.п. как минимум).

2. Принимая во внимание социальную вариативность современного российского социума, допускаем, что «... притязая на единственно правильную идентичность, сильная идентичность будет склонна определять серию различий как некое внутреннее зло, иррациональность, ненормальность и т.п., иными словами, как опасность, от которой следует защищаться с помощью власти» [4]. А потому вопросы о необходимости детализации, рационализации (посредством привязки к повседневности, реальным примерам) и рефлексии школьниками из различных социальных общностей в границах таких антропо-образов, как «мы – россияне», «мы – российский школьники», «мы – граждане России» и способов их социокультурной трансляции должны занять значимую роль в повестке реализации политики идентичности для педагогических коллективов общеобразовательных организаций.

3. Реализация педагогических механизмов политики идентичности обусловлена необходимостью выбора субъектом между предпочитаемыми и отвергаемыми антропо-образами и образцами, которые находятся в зоне реше-

ния противоречия между непротиворечивой (позитивной) и навязанной идентичностью (последняя, правда, имеет возрастосообразные коннотации).

4. В основе политики идентичности, как отмечалось выше, лежит некая согласованная позиция. В ее основе – артикулированный или представленный имплицитно базовый набор идентичностей (БНИ) той или иной общности. Его составляющими выступают общепринятые в этой общности антропо-образы и образцы, которые имеют необходимую поддержку, одобрение, прошли проверку на жизнеспособность, социо-, культуро- и человекообразность. Вряд ли приходится говорить о некоей целостности данного набора. Скорее, это – согласованный конгломерат социокультурных идентичностей, носителями которых выступают значимые группы и сообщества. Как в калейдоскопе, данный набор в различных ситуациях повседневной реальности проявляет себя различными гранями и в различных конфигурациях.

ЛИТЕРАТУРА

1. *Андрюшков А.А.* Формирование российской идентичности как задача образования: мировоззрение, создающее будущее // *Educational studies*. Moscow. 2011. № 3. СС. 287–301.
2. *Галямина Ю.Е.* мы – они: как в дискурсе Владимира Путина разных лет конструируется идентичность // *Политическая наука*. 2016. № 3. СС. 152–167.
3. *Григорьев Д.В.* Политика идентичности и уклад школы // «Народное образование», 2016. № 2–3. СС. 147–162.
4. *Гришин Н.В.* Государственная политика идентичности: новая ставка в политической борьбе // *Вестник Томского государственного университета. Философия. Социология. Политологи*. 2020. № 55. СС. 231–239.
5. *Дугин А.Г.* Ноомахия: войны ума. Русский Логос I. Царство Земли. Структура русской идентичности. Москва: Академический проект, 2019. 461с.
6. *Ильин И.А.* О русском национализме: сборник статей. Москва: Российский Фонд Культуры, 2007. 150 с.
7. *Карамзин Н.М.* Записка о древней и новой России в ее политическом и гражданском отношениях. URL: <http://www.hist.msu.ru/ER/Etext/karamzin.htm>.
8. *Кон И.С.* В поисках себя: Личность и ее самосознание. Москва: Прогресс, 1990. 367с.
9. Конституция Российской Федерации (принята всенародным голосованием 12.12.1993 с изменениями, одобренными в ходе общероссийского голосования 01.07.2020). URL: <http://kremlin.ru/acts/constitution>.
10. *Струве П.Б.* Великая Россия и святая Русь. URL: <https://monop.livejournal.com/3-16925.html>.
11. *Тишков В.А.* Национальная идея России: российский народ и его идентичность. Москва: Времена, 2021. 413с.
12. *Шакурова М.В., Сырых Т.В., Лактионов В.В.* Педагогическое сопровождение становления российской идентичности школьников. Воронеж: Воронежский государственный педагогический университет, 2010. 159с.
13. *Etkind А.М.* Psychological Culture / Russian Culture at the Crossroad / Ed. D. Shalin. Boulder: Westview Press, 1996.

14. *Magun V. In the Circle of "Self-Efficacy": The De-statization of the Post-Soviet Individual* // *Russian Politics and Law*. 2018. № 56 (3). PP. 183–188.

CIVIC IDENTITY RESOURCES TO MINIMIZE ETHNIC NEGATIVISM

A. Makhinin¹, M. Shakurova²

¹Voronezh State Pedagogical University

²Voronezh State Pedagogical University

alex-makhinin@yandex.ru, shakurova@mail.ru

ABSTRACT

The authors draw attention to the fact that with the actual growth of the research interest of modern human science in the phenomenon of identity, this category extremely quickly began to claim that it was considered today as an essential feature of pedagogical theory and social and pedagogical practices became in demand due to the obvious risk of individual-personal deformations and alienations, loss of so necessary for a person of compatibility. One of the markers of the socially significant search for the mechanisms of rooting a growing person in the world, culture, social institutions and, as a result, the harmonization of the inner world and the acquisition of the desired Human appearance in each has become identity discourse. According to the authors, subject identity is a matrix structure based on many identities that interact and complement each other, including civic identity. In this regard, the scientific and methodological justification and methodological search for resources of civil identity in the context of the implementation of the policy of Russian (in the understanding of civil) identity in the education system in order to achieve the realism of the images of "I" and their implementation, the referencing of the socio-cultural environment, the significance of choice and subject position and reduce psychological discomfort within the boundaries of such a multinational state as the Russian Federation.

Keywords: Russian (civil) identity, identity politics, social communities, social and ethnocultural guidelines, civil and ethnic nationalism.

ПСИХОЛОГИЯ

ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԼՈԿՈՒՍԸ, ԿՈԳՆԻՏԻՎ ՈՃԸ ԵՎ ՔՈՓԻՆԳ
ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԺՎԱՐ ԿԵՆՍԱԿԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Լ.Ռ. Արամյան, Ս.Ա. Մակիչյան

*Խ. Արմյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան*

aramyanlida23@aspu.am, makichyansona23@aspu.am

ԱՄՓՈՓՈՒՄ

Հասարակության զարգացման արդի ժամանակահատվածում աճել է դժվար կենսական իրավիճակներում գտնվող մարդկանց հիմնախնդիրների հետազոտությունների հետաքրքրությունը բարդ, անցանկալի հետևանքների հաղթահարման, համապատասխան ռազմավարությունների ընտրության, անձնային գործոնների ազդեցության տեսանկյունից: Խնդրահարույց իրավիճակները ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ խախտվում է մարդու կյանքի բուն ընթացքը, և նա չի կարողանում լուծել այս կամ այն խնդիրը իր համար սովորական վարքագծի միջոցով: Դժվար իրավիճակների հաղթահարման ռազմավարության ընտրության վրա ազդում է նաև վերահսկողության լոկուսը: Քանի որ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ ինտերնալության և կյանքի իմաստի մեջ: Այս համատեքստում կարևորել ենք դժվար կենսական իրավիճակների գնահատման և ռազմավարությունների ընտրության անձնային դետերմինանտները, որոնց վեր հանումը եղել է հետազոտության նպատակը: Հետազոտության ընթացքում առաջ էր քաշվել այն ենթադրությունը, որ դժվար կենսական իրավիճակների գնահատման և հաղթահարման ռազմավարությունների ընտրությունը կախված է անձի վերահսկողության լոկուսից և կոգնիտիվ ոճերից: Հետազոտության հիմնական խնդիրն էր պարզել վերահսկողության լոկուսի և կոգնիտիվ ոճերի ազդեցությունը քոփինգ ռազմավարությունների ընտրության վրա: Արդյունքները փաստում են, որ քոփինգ վարքի օգնությամբ անձը փորձում է հաղթահարել հուզական սթրեսը և նվազեցնել հոգեբանական լարվածությունը, փոխակերպել վարքը կամ հարմարվել իրավիճակին՝ հիմնվելով սեփական ռեսուրսների և միջավայրի վրա: Յուրաքանչյուր անձ կարող է տարբեր կերպ արձագանքել իրավիճակին, հաղթահարման տարբեր ռազմավարություններ ընտրել՝ կախված անհատական առանձնահատկություններից:

Հիմնաբառեր՝ դժվար իրավիճակներ, ռազմավարություն, լոկուս, ոճ:

Հասարակության զարգացման արդի ժամանակահատվածում աճել է դժվար կենսական իրավիճակներում գտնվող մարդկանց հիմնախնդիրների հետազոտությունների հետաքրքրությունը՝ բարդ, անցանկալի հետևանքների հաղթահարման, համապատասխան ռազմավարությունների ընտրության, անձնային գործոնների ազդեցության տեսանկյունից: Յուրաքանչյուր անձ իր կենսագործության ընթացքում պարբերաբար հայտնվում է տարաբնույթ դժվար իրավիճակներում՝ հաղթահարման համար ընտրելով կառուցողական կամ ոչ կառուցողական մեխանիզմներ, քոփինգ ռազմավարություններ:

Խնդրահարույց իրավիճակները ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ խախտվում է մարդու կյանքի բուն ընթացքը, և նա չի կարողանում լուծել այս կամ այն խնդիրը իր համար սովորական վարքագծի միջոցով: Միևնույն ժամանակ, կյանքի դժվարությունների աղբյուր կարող են լինել ինչպես անհատական գործոնները, այնպես էլ միջավայրի ազդեցությունները: Համապատասխանաբար, անձն այսպիսի իրավիճակում չի լիարժեք գործել և ստիպված է փոխել վարքագիծը: Վերջինս անհատից պահանջում է սոցիալական որոշակի ակտիվություն, ինչն ուղղված կլինի ցանկալի արդյունքի ձեռքբերմանը: Ընտրություն կատարելու անհրաժեշտությունը առաջացնում է լարվածություն, որն արտահայտվում է ինչպես իր անձի՝ որպես սուբյեկտի, այնպես էլ այլ մարդկանց շահերի միջև հակասություններով [1, էջ 72–75]:

«Անձի կենսական իրավիճակի բարդության մակարդակ» կատեգորիան առաջ են քաշել Ռ. Բանդլերը և Ջ. Գրինդերը: Ըստ նրանց, իրավիճակի բարդության մակարդակը զգալիորեն ազդում է անհատի վարքի ճկունության աստիճանի վրա: Նրանք առանձնացնում էին իրավիճակի բարդության հինգ մակարդակ և կյանքի իրավիճակի հուզական վերապրման համապատասխան արագություն (իրավիճակը ընդունելուց մինչև խոր սթրես) [5, էջ 31]:

Ժամանակակից հոգեբանության մեջ ներկայացվում են կյանքի իրավիճակների ընկալման երկու մոտեցումներ. մի դեպքում իրավիճակը դիտարկվում է որպես որոշակի օբյեկտիվ իրողություն, կյանքի արտաքին պայմաններ, որոնք ստեղծում են տարածական-ժամանակային սահմաններ: Մյուս դիրքորոշման համաձայն իրավիճակը դիտարկվում է անհատի և միջավայրի փոխազդեցությամբ (Լ. Ս. Վիգոտսկի, Կ. Լեվին, Ա. Ն. Լեոնտև, Բ. Ֆ. Լոմով, Վ. Ա. Պետրովսկի, Ն. Վ. Գրիշինա, Ե. Յու. Կորժովա) [3, էջ 17–18]:

Դժվար իրավիճակների հաղթահարման ռազմավարության ընտրության վրա ազդում է նաև վերահսկողության լոկուսը: Քանի որ գոյություն

ունի ուղիղ համեմատական կապ ինտերնալության և կյանքի իմաստի մեջ. որքան սուբյեկտը շատ է հավատում, որ կյանքում ամեն ինչ կախված է սեփական ջանքերից, ընդունակություններից, մտքերից, գործողություններից, այնքան շատ է գտնում կենսական իմաստ և նպատակին տանող ուղիներ: Պատասխանատվությունը անձի կարևորագույն բնութագրերից է, որն իր ազդեցությունն է ունենում մարդու վարքի վրա, դժվար իրավիճակների լուծման ժամանակ:

Իսկ կոգնիտիվ ոճերը բնութագրում են անձի վարքագիծը, ինտելեկտուալ կարողությունները, որի դեպքում մենք կարող ենք հասկանալ անհատի ընդունակությունները, կարողությունները, և, թե ինչ հաղթահարման ռազմավարություն է ընտրում տարբեր դժվար իրավիճակներում:

Այս համատեքստում կարևորում ենք դժվար կենսական իրավիճակների գնահատման և ռազմավարությունների ընտրության անձնային դետերմինանտները, որոնց վեր հանումը եղել է մեր հետազոտության նպատակը: Հետազոտության ընթացքում առաջ էր քաշվել այն ենթադրությունը, որ դժվար կենսական իրավիճակների գնահատման և հաղթահարման ռազմավարությունների ընտրությունը կախված է անձի վերահսկողության լոկուսից և կոգնիտիվ ոճերից: Հետազոտության հիմնական խնդիրն էր պարզել վերահսկողության լոկուսի և կոգնիտիվ ոճերի ազդեցությունը քոփինգ ռազմավարությունների ընտրության վրա:

Հետազոտական խնդրի վերհանման համար օգտագործվել է դիտման թեսթավորման մեթոդները և Ռ. Լազարուսի «Քոփինգ միջոցների հարցարան (WCQ)» [4], Ջ. Ռոթերի «Վերահսկողության լոկուսի սանդղակ» [6], Ջ. Ստրուպի «Բառագունային ինտերֆերենցիա» [8] մասնավոր մեթոդիկաները:


Հետազոտությանը մասնակցել են թվով 50 անձ, 30–35 տարեկան (որպես կյանքի դժվար իրավիճակներ համարել ենք արդի պայմանները՝ համավարակ, պատերազմ):

Հետազոտության իրականացումը կազմակերպվել է տարիքային տարբեր խմբերի հետ, որոնք ունեցել են որոշակի դժվար կենսական իրավիճակների հաղթահարման փորձ:

Քոփինգ-ռազմավարությունների ընտրության տոկոսային ցուցանիշը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում առավելաչափ արտահայտված են ինքնավերահսկողության, դրական վերագնահատման, խնդրի լուծման պլանավորման, փախուստ-խուսափման կոպինգ ռազմավարությունները, իսկ միջին մակարդակով՝ սոցիալական օգնության որոնման, օտարացման, հակադրման քոփինգի, պատասխանատվության ընդունման ռազմավարությունները (տես՝ նկար 1.):


Փորձարարական խմբի 12%-ը պատկանում է վերահսկողության ուղղվածության ինտերնալ տիպին, ինչը ենթադրում է, որ անձն ունի սուբյեկտիվ վերահսկողության բարձր մակարդակ և կարծում է, որ իր կյանքի ամենակարևոր իրադարձությունները կախված են իր անձնային հատկություններից (կոմպետենտ, նպատակասլաց, համառ, կարողությունների աստիճանից և այլն): Նման վերահսկողության լոկուս ունեցող մարդիկ ունեն հուզական կայունություն, համատարություն, վճռականություն, շփվող են, ունեն լավ ինքնատիրապետում: Հետազոտվողների 88%-ը պատկանում է վերահսկողության ուղղվածության խառը տիպին, որը բնորոշ է մարդկանց մեծամասնությանը: Իրենց սուբյեկտիվ վերահսկողության առանձնահատկությունները կարող են փոփոխվել իրավիճակի գնահատման արդյունքում: Փորձարարական խմբում բացակայում էր վերահսկողության ուղղվածության էքստերնալ տիպը (տե՛ս նկար 2.):

Նկար 1.




Քոնիինգ ռազմավարությունների արտահայտվածության տոկոսային ցուցանիշը:

Նկար 2.



Սուբյեկտիվ վերահսկողության տոկոսային ցուցանիշը:


Նկար 3.



Ճկունություն-ռիզիկոյություն (քարացածություն) կոզնիտիվ ոճերի արտահայտվածության տոկոսային ցուցանիշը:

Փորձարարական խմբի 64%-ին բնորոշ է ճկուն կոգնիտիվ ոճը: Ճկուն ոճի դեպքում անցումը ավելի հեշտ է ավտոմատացման բարձր աստիճանի պատճառով: Հետազոտվողների 36%-ին բնորոշ է ռիզիկո կոգնիտիվ ոճը (տե՛ս նկար 3.):


Քոփինգ ռազմավարությունների և վերահսկողության լոկուսի հետազոտության արդյունքների համադրումից պարզ է դարձել, որ վերահսկողության լոկուսի ուղղվածության խառը տիպի անձանց մոտ քոփինգ ռազմավարություններից առավելաչափ արտահայտվել են ինքնավերահսկողությունը, դրական վերագնահատումը, խնդրի լուծման պլանավորումը, փախուստ-խուսափումը (տե՛ս նկար 4.):



Քոփինգ ռազմավարությունների արտահայտվածության տոկոսային ցուցանիշը վերահսկողության ուղղվածության լոկուսի խառը խմբում:

Վերահսկողության ուղղվածության լոկուսի և՛ խառը, և՛ ինտերնալ խմբերում քոփինգ ռազմավարություններից առավել են արտահայտված ինքնավերահսկողությունը, դրական վերագնահատումը, խնդրի լուծման պլանավորումը, փախուստ-խուսափումը, սակայն ինտերնալների շրջանում (փորձարկվողների 12%), քոփինգ ռազմավարություններից արտահայտված է ինքնավերահսկողությունը՝ 100% առավելաչափ մակարդակով: Նման վարքագիծը բնորոշ է այն մարդկանց, ովքեր չափազանց պահանջկոտ են նաև սեփական անձի նկատմամբ: Սոցիալական օգնության փնտրտուքն առավել արտահայտված է վերահսկողության լոկուսի խառը խմբում, ինչը պայմանավորված է խնդրահարույց իրավիճակների լուծման համար արտաքին ռեսուրսների կիրառության հնարավորությամբ /տե՛ս նկար 5.:/

Նկար 5.



Քույրինգ ռազմավարությունների արտահայտվածության տոկոսային ցուցանիշը ճկունություն-ռիզիկոսություն (քարացածություն) կոզնիտիվ ոճերի ճկուն խմբում:

Ճկունություն-ռիզիկոսություն (քարացածություն) կոզնիտիվ ոճերի և քույրինգ ռազմավարությունների արդյունքների համադրումից պարզ է դառնում, որ հակադրման քույրինգը առավել արտահայտված է ռիզիկո կոզնիտիվ ոճին պատկանող հետազոտվողների շրջանում, որի արտահայտված հաճախականության ժամանակ կարող են վարքագծում ի հայտ գալ իմպուլսիվություն, գործողությունների պլանավորման դժվարություն, դրանց արդյունքների կանխատեսումը, վարքագծի ռազմավարության շտկումը, չարդարացված համատությունը: Այսպիսի դեպքերում քույրինգ-գործողությունները կորցնում են իրենց նպատակաուղղվածությունը և գերազանցապես դառնում են էմոցիոնալ լարվածությունից ազատման արդյունք: Հաճախակի առճակատման ռազմավարությունը դիտարկվում է որպես ոչ ադապտիվ, սակայն չափավոր կիրառության դեպքում այն ապահովում է դժվարություններին հակազդելու, անհատի ընդունակությունները, եռանդին, խնդրային իրավիճակների լուծման ժամանակ, սեփական շահերը պաշտպանելու կարողությունը, սթրեսային պայմաններում անհանգստությունը վերահսկելուն:


Օտարացում ռազմավարությունը առավել արտահայտված է ճկուն կոզնիտիվ ոճի դեպքում, որը բնութագրում է ինտելեկտուալ եղանակների կիրառությունը, ռացիոնալիզացիան, ուշադրության շեղումը, մեկուսացումը, հումորը և այլն: Դրական կողմերն են՝ դժվար լուծելի իրավիճակների սուբյեկտիվ նշանակալիության նվազեցման հնարավորությունը և հիասթափության ժամանակ ինտենսիվ էմոցիոնալ արձագանքների հաղթահարումը, բացասական կողմը է՝ սեփական ապրումների

արժեզրկման հավանականություն, լուծում պահանջող իրավիճակի նկատմամբ ոչ բավարար լրջությունը:

Սոցիալական օգնության փնտրտույքը առավել է արտահայտված ճկուն, և միջին արտահայտված՝ ռիզիկո կոգնիտիվ ոճի դեպքում, ինչի հետևանքով ճկուն կոգնիտիվ ոճ ունեցող անձինք առավելաչափ են օգտվում սոցիալական աջակցությունից, որը բնութագրում է կողմնորոշվածությունը այլ մարդկանց հետ փոխգործունեության, աջակցության, ուշադրության, խորհուրդների, համակրանքի սպասումները:

Քոփինգ ռազմավարություններից դրական վերագնահատումը և խնդրի լուծման պլանավորումը առավել է արտահայտված ռիզիկո կոգնիտիվ ոճին պատկանող հետազոտվողների շրջանում, ինչը ենթադրում է, որ սվյալ կոգնիտիվ ոճի դեպքում, բնութագրական է ռազմավարության առավելաչափ կիրառման դեպքում բարձր լարվածություն, քոփինգի ոչ ադապտիվ տարբերակ, խնդրահարույց իրավիճակի փիլիսոփայական գիտակցումը, իրավիճակի հաղթահարման գործնական հնարավորությունների թերագնահատումը (տես՝ նկար 6.):

Նկար 6.



Քոփինգ ռազմավարությունների արտահայտվածության տոկոսային ցուցանիշը ճկունություն-ռիզիկոություն (քարացածություն) կոգնիտիվ ոճերի ռիզիկո խմբում:

Այսպիսով, քոփինգ վարքի օգնությամբ անձը փորձում է հաղթահարել հուզական սթրեսը և նվազեցնել հոգեբանական լարվածությունը, փոխակերպել վարքը կամ հարմարվել իրավիճակին՝ հիմնվելով սեփական ռեսուրսների և միջավայրի վրա: Յուրաքանչյուր անձ կարող է տարբեր կերպ արձագանքել իրավիճակին, հաղթահարման տարբեր ռազմավարություններ ընտրել՝ կախված անհատական առանձնահատկություններից:

ՉԴՄԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Бекова Ж.К., Рыскулова М.М.* Психологическая помощь в трудной жизненной ситуации // *Личность в трудных жизненных ситуациях: ресурсы и преодоление.* Омск, 4–5 октября 2018г. СС. 72–75.
2. *Битюцкая Е.В.* Когнитивное оценивание трудной жизненной ситуации с позиций деятельностного подхода А.Н. Леонтьева // «Вестник Московского университета», Сер. 14. Психология, 2013. № 2. СС. 40–56.
3. *Битюцкая Е.В., Петровский В.А.* К вопросу о субъективной и объективной трудности жизненной ситуации // *Психология стресса и совладающего поведения: ресурсы, здоровье, развитие: материалы IV Междунар. науч. конф. Кострома, 22–24 сент. 2016г., Т.2. 2016. Т. 1. С. 407. СС. 17–19.*
4. *Крюкова Т.Л. Хохлова Ю.А.* Феномен когнитивных искажений в субъективной оценке жизненных событий // *Личность в трудных жизненных ситуациях: ресурсы и преодоление.* Омск, 4–5 октября 2018г. СС. 33–36.
5. *Осухова Н.Г.* Психологическая помощь в трудных и экстремальных ситуациях: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Н.Г. Осухова. 2-е изд., испр. М.: Издательский центр «Академия», 2007. С. 28.
6. *Психология личности: практикум.* / Сост. Н.С. Колмогорова, А.В. Сивцова. Барнаул: Изд-во АГАУ, 2013. С. 89. СС. 10–14.
7. *Carver C., Scheier M., Weintraub J.* (1989) Assessing coping strategies: a theoretically based approach. *Journal of personality and social psychology*, 56(2). СС. 267–283.
8. <https://psychojournal.ru/tests/674-test-strupa-metodika-slovesno-cvetovoy-interferencii.html/> Психологический журнал. Тест Струпа. Методика словесно-цветовой интерференции.

ЛОКУС КОНТРОЛЯ, КОГНИТИВНЫЙ СТИЛЬ И ВЫБОР КОПИНГ-СТРАТЕГИЙ В СЛОЖНЫХ ЖИЗНЕННЫХ СИТУАЦИЯХ

Л.Р. Арамян, С.А. Макичян

Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна

АННОТАЦИЯ

В современный период развития общества возрос интерес к исследованию проблем людей, находящихся в сложных жизненных ситуациях, с точки зрения преодоления сложных нежелательных последствий, выбора соответствующих стратегий, влияния личностных факторов. Проблемные ситуации возникают, когда у человека нарушается само течение жизни, и он не в состоянии решить ту или иную проблему своим привычным поведением. Локус-контроль также влияет на выбор стратегии совладания с трудными ситуациями, потому что существует прямая зависимость между интернальностью и смыслом жизни. В этом контексте мы выделили личностные детерминанты оценки сложных жизненных ситуаций и выбора стратегии, что и было целью исследования. В ходе исследования было выдвинуто предположение, что выбор стратегий оценки и совладания с трудными жизненными ситуациями зависит от локуса контроля и когнитивных стилей личности. Основной задачей исследования было выяснить влияние локуса контроля и когнитивных

стилей на выбор копинг-стратегий. Полученные результаты свидетельствуют о том, что с помощью копинг-поведения человек пытается преодолеть эмоциональный стресс и снизить психологическое напряжение, трансформировать поведение или адаптироваться к ситуации, опираясь на собственные ресурсы и среду. Каждый человек может по-разному реагировать на ситуацию, выбирать разные стратегии совладания в зависимости от индивидуальных особенностей.

Ключевые слова: сложные ситуации, стратегия, локус, стиль.

LOCUS OF CONTROL, COGNITIVE STYLE AND CHOICE OF COPING STRATEGIES IN DIFFICULT LIFE SITUATIONS

L. Aramyan, S. Makichyan

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

ABSTRACT

In the modern period of the development of society, interest has increased in studying the problems of people in difficult life situations, in terms of overcoming complex undesirable consequences, choosing appropriate strategies, and the influence of personal factors. Problem situations arise when a person's very course of life is disturbed, and he is not able to solve this or that problem with his usual behavior. The locus of control also influences the choice of strategies for coping with difficult situations, because there is a direct relationship between internality and the meaning of life. In this context, we identified the personal determinants of assessing difficult life situations and choosing a strategy, which was the purpose of the study. The study suggested that the choice of strategies for assessing and coping with difficult life situations depends on the locus of control and cognitive styles of the individual. The main objective of the study was to find out the influence of locus of control and cognitive styles on the choice of coping strategies. The results obtained indicate that with the help of coping behavior a person tries to overcome emotional stress and reduce psychological stress, transform behavior or adapt to the situation, relying on their own resources and environment. Each person can react differently to the situation, choose different coping strategies depending on individual characteristics.

Keywords: difficult situations, strategy, locus, style.

**ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ա.Հ. Ասլանյան

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան*

*Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն
aslanyan.an@mail.ru*

ԱՍՓՈՓՈՒՄ

Այսպիսով, աշխարհն այսօր արդեն ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը, ընդունում նրանց իրավունքները և ձգտումը դեպի համընդհանուր հավասարություն:

Առաջատար շատ երկրներ հաշմանդամների հիմնահարցերին առընչվող քաղաքականությունն իրականացնում են հաշմանդամության սոցիալական մոդելի և դրան ներհատուկ գործիքների կիրառման միջոցներով՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար իրավունքներ և մատչելի պայմաններ:

Հիմնաբառեր՝ Ֆունկցիոնալության միջազգային դասակարգում, չափորոշիչ, գնահատման գործընթաց, բժշկասոցիալական, կենսագործունեություն, սոցիալական անբավարարություն, հաշմանդամ, փորձաքննություն:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության սահմանման դասակարգիչները և հաշմանդամության խմբերը սահմանելու չափանիշները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի 780-Ն որոշմամբ [2; 6]: Այս իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության 2002թ.-ին կազմավորված բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը, որը հանդիսանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին: Համաձայն ՀՀ կառավարության 780-Ն որոշման ՀՀ-ում հաշմանդամությունը սահմանվում է որպես հիվանդություններով, վնասվածքներով կամ արատներով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն և հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և

սոցիալական պաշտպանության անհրաժեշտության [7;10]: Ինչպես նշվեց, բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ: «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի սահմանման չափորոշիչները բխում են երեխայի զարգացման և կառուցվածքային-գործառնական առանձնահատկություններից:

ՖՄԴ-ն ունի մի շարք նպատակներ և նախատեսված է տարբեր ոլորտների և ճյուղերի շրջանակում կիրառելու համար: Հիմնական նպատակներն ամփոփ ներկայացված են ստորև.


- գիտական հենք ապահովել առողջական վիճակները, առողջությանն առնչվող վիճակները, առողջական վիճակների ելքերն ու որոշիչները հասկանալու և ուսումնասիրելու համար,
- ձևավորել միասնական լեզու, որով հնարավոր կլինի նկարագրել առողջական և առողջությանն առնչվող վիճակները՝ նպաստելով տարբեր օգտվողների, օրինակ՝ առողջապահության ոլորտում աշխատողների, հետազոտություն իրականացնողների, քաղաքականություն մշակողների և հանրության, այդ թվում՝ հաշմանդամների միջև հաղորդակցության որակի բարձրացմանը,
- հնարավոր դարձնել տվյալների համեմատությունը տարբեր երկրների, առողջապահության ոլորտների, ծառայությունների միջև, ինչպես նաև ժամանակային տարբեր պահերին,
- առողջապահության տեղեկատվական համակարգերի համար ապահովել ծածկագրման համակարգված սխեմա:

Այս նպատակները փոխկապակցված են, ուստի ՖՄԴ-ի նպատակներն իրագործելու և տարբեր ոլորտներում դրա կիրառումը հնարավոր դարձնելու նպատակով իմաստային և գործնական համակարգի ստեղծումը կարևոր նախապայման է: Այդ համակարգը կարող է կիրառվել զանազան սպառողների կողմից՝ տարբեր մշակույթներում առողջապահական քաղաքականության մշակման, որակի ապահովման և արդյունքների գնահատման նպատակներով [5]:

Համաձայն ՀՀ կառավարության 780-Ն որոշման հաշմանդամության սահմանման դասակարգիչներն ըստ ՖՄԴ-ի ներկայացված են և համակարգված իմաստային, փոխկապակցված և մատչելի ձևով: 2007թ.-ին ԱՀԿ-ն ընդունեց ՖՄԴ-ի լրամշակված տարբերակը՝ ներառելով լրացուցիչ 200 ծածկագրեր երեխաների և երիտասարդների համար (ICF-CY; ՖՄԴ-ԵՊ): ՖՄԴ-ն շեշտը դնում է անհատի ուժեղ կողմերի, պահպանված

կարողությունների վրա, նպաստելով նրա առավել ակտիվ մասնակցությանը հասարակական կյանքում, ներառյալ աշխատանքային գործունեությունը:

Անձի աշխատունակությունը հանդիսանում է ՖՄԴ բաղադրիչներից մեկը: ՖՄԴ-ն հնարավորություն է տալիս անձի կարիքների գնահատման և դրանց բավարարմանն ուղղված բազմաբնույթ ծառայությունների մատուցման ուղղությամբ վարվող քաղաքականություններում ցուցաբերել միասնական և համակարգված համակողմանի մոտեցում:



Նկար 1. Ֆունկցիոնալության և հաշմանդանության բաղադրիչները օրգանիզմի ֆունկցիաների, կենսագործունեության և մասնակցության տեսանկյունից:

ՖՄԴ-ն տալիս է մարդու օրգանիզմի ֆունկցիաների և դրանց սահմանափակումներին վերաբերող իրավիճակների նկարագրությունը և հանդիսանում է այդ տեղեկատվության համակարգման հիմքը (Նկար 1.): Այն ստացված տեղեկությունները բաժանում է երկու մասի՝

1. օրգանիզմի ֆունկցիոնալություն և գործունեության սահմանափակում,

2. միջավայրային գործոններ:

«**Օրգանիզմ**» բաղադրիչը ներառում է օրգանիզմի ֆունկցիաները և օրգանիզմի կառուցվածքը:

«**Գործունեություն**» բաղադրիչը ներառում է ակտիվությունը և մասնակցությունը: Խանգարումը/սահմանափակումը օրգանիզմի ֆունկցիաներում կամ կառուցվածքներում ի հայտ եկող խնդիրներն են, ակտիվությունը անհատի կողմից առաջադրանքի կամ գործողության կատարումն է, մասնակցությունը կենսական իրավիճակում ներգրավվածությունն է, ակտիվության սահմանափակումները այն դժվարություններն են, որոնք անհատը կարող է ունենալ տվյալ գործողությունը կատարելիս: Մասնակցության սահմանափակումները այն դժվարություններն են, որոնք անհատը կարող է ունենալ կենսական իրավիճակում ներգրավվածության ժամանակ:

«Միջավայրային գործոնները» ներառում են անհատի վրա միջավայրի ազդեցության և անհատական գործոնները: Միջավայրային գործոնները գտնվում են անհատից դուրս, նրանից անկախ և կարող են ունենալ դրական կամ բացասական ազդեցություն: Դրանք են՝ օրենսդրությունը, ֆիզիկական միջավայրը (բնական միջավայր և մարդածին փոփոխություններ միջավայրում), մշակույթը, տեխնոլոգիաները, հասարակությունը, ծառայությունները, համակարգերը, վերաբերմունքը և կենցաղային պայմանները և այլն [1; 3]:

ՖՄԴ-ում տեղեկությունները ներկայացված են ևս երկու մասով: 1-ին մասը վերաբերում է ֆունկցիոնալությանը և հաշմանդամությանը, իսկ 2-րդ մասը՝ կոնտեքստուալ գործոններին: Մասերից յուրաքանչյուրն ունի երկու բաղադրիչ:

1. «Ֆունկցիոնալություն և հաշմանդամություն» մասի բաղադրիչներ.

«Մարմին» բաղադրիչը բաղկացած է երկու դասակարգումից. դրանք են օրգան համակարգերի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը: Երկու դասակարգումներում էլ գլուխները կազմված են ըստ օրգան համակարգերի:

«Կենսագործունեություն և մասնակցություն» բաղադրիչը ներառում է ոլորտների մի ամբողջական շրջանակ, որտեղ նշված են ֆունկցիոնալության կողմերը թե՛ անհատական և թե՛ հասարակական տեսանկյունից:

2. «Կոնտեքստուալ գործոններ» մասի բաղադրիչներ.

«Կոնտեքստուալ գործոններ» մասի առաջին բաղադրիչը «Միջավայրային գործոններ» բաղադրիչն է: Միջավայրային գործոններն ազդում են ֆունկցիոնալության և հաշմանդամության բոլոր բաղադրիչների վրա և նշված են ըստ հերթականության՝ սկսած անհատին անմիջականորեն շրջապատող միջավայրից մինչև ընդհանուր միջավայրը:

«Կոնտեքստուալ գործոններ» մասի բաղադրիչներից է նաև «Անձնական գործոններ» բաղադրիչը, որը, սակայն, ՖՄԴ-ում դասակարգված չէ՝ պայմանավորված այդ գործոնների՝ սոցիալական և մշակութային բազմազանությամբ:

ՖՄԴ-ի 1-ին մասում ֆունկցիոնալության և հաշմանդամության բաղադրիչները կարող են արտահայտվել երկու ձևով: Մի կողմից դրանք կարող են կիրառվել՝ ցույց տալու խնդիրների (օրինակ՝ «հաշմանդամություն» հավաքական տերմինով ամփոփված խանգարում/խախտում, կենսագործունեության կամ մասնակցության սահմանափակում) առկայությունը, մյուս կողմից՝ նշելու առողջական և առողջությանն առնչվող վիճակների ոչ պրոբլեմատիկ (այսինքն՝ չեզոք) կողմերը, որոնք ամփոփված են «ֆունկցիոնալություն» հավաքական տերմինի ներքո [4;9]:

Ֆունկցիոնալության և հաշմանդամության այդ բաղադրիչները ներկայացված են չորս՝ առանձին, բայց փոխկապակցված կառույցների միջոցով: Այդ կառույցները գործածվում են հատկորոշիչների կիրառմամբ: Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը կարող են ներկայացվել ֆիզիոլոգիական համակարգերի կամ անատոմիական մասերի փոփոխությունների միջոցով: «Կենսագործունեություն և մասնակցություն» բաղադրիչի դեպքում կան երկու կառույցներ՝ կարողություն և կատարողականություն (տե՛ս 4.2 բաժինը):

Մարդու ֆունկցիոնալությունն ու հաշմանդամությունն ընկալվում են որպես դինամիկ փոխազդեցություն¹ առողջական խնդիրների (հիվանդություններ, խանգարումներ, խախտումներ, վնասվածքներ, տրավմաներ և այլն) և միջավայրային գործոնների միջև: Ինչպես նշվել է վերևում, «Միջավայրային գործոններ»-ի մեջ ներառված են անձնական և անձին շրջապատող միջավայրային գործոնները: ՖՄԴ-ում, որպես դասակարգման առանցքային բաղադրիչ, ներառված է միջավայրային գործոնների համապարփակ ցանկ: Միջավայրային գործոնները փոխազդում են ֆունկցիոնալության և հաշմանդամության բոլոր բաղադրիչների հետ: «Միջավայրային գործոններ» բաղադրիչի գլխավոր կառույցը ֆիզիկական և սոցիալական միջավայրի ու հասարակության վերաբերմունքի օժանդակող կամ խոչընդոտող ազդեցությունն է [10]:

Ինչն է, չնայած համակարգում առկա բոլոր բացթողումներին և խնդիրներին, այսօր Հայաստանը ձեռնամուխ է եղել գործող համակարգի բարեփոխմանը և կատարելագործմանը, սոցիալական և ֆիզիկական միջավայրի հարմարեցմանը, հաշմանդամների հաշվառման, գնահատման և տեղեկատվության հավաքագրման մեխանիզմների կատարելագործմանը: Բարեփոխումների այս ողջ համակարգն, իհարկե, հետագայում կխթանի հաշմանդամներին հասարակության մեջ որպես լիարժեք անդամ ներգրավվելուն, կյանքի որակի բարձրացմանը, հաշմանդամության թվաքանակի նվազեցմանը, անհարմարությունների ու բարդությունների վերացմանը և այլն:

Այսպիսով, ՀՀ-ում իրականացվող ներկայիս բարեփոխումները հնարավորություն են ընձեռում վերանայելու զարգացման խանգարումներ ունեցող և հաշմանդամության գնահատման համակարգը, ինչը թույլ կտա ապահովել հաշմանդամների համահավասար հասարակական կյանքի պայմաններ, հնարավորություններ, կիրառել անձի կարիքների և

¹ Այս փոխազդեցությունը կարող է դիտվել որպես գործընթաց կամ արդյունք, կախված օգտվողից:

կարողությունների բազմակողմանի գնահատման նոր մոդել, որի հիմքում ընկած են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) գաղափարախոսությունն ու սկզբունքները: Նոր մոդելը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ և բազմակողմանի գնահատել անձի կարողությունները և սահմանել հաշմանդամությունը՝ հաշվի առնելով ոչ միայն առողջական խնդիրը, ախտորոշումը, կարողությունը, այլև այն միջավայրային գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են գործունեության վրա: Մոդելի ներդրման հիմնական նպատակն է անձի բազմակողմանի գնահատված կարիքներին համարժեք վերականգնողական ծառայությունների մատուցումը: Այս ուղղությամբ մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել ՀՀ կառավարության մի շարք որոշումների նախագծեր, որոնց ընդունումից հետո 2018 թ. հունվարի 1-ից նախատեսված է հաշմանդամության սահմանման համար առաջնակի դիմողների բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնել ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա [8;10]:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության և հաշմանդամների իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ նման անձանց սոցիալական ներառման, իրավահավասարության խթանման և հավասար հնարավորությունների ստեղծման խնդիրները մշտապես գտնվել են պետության ուշադրության ներքո: Չնայած այս հանգամանքին, օրենքով նախատեսված շատ դրույթներ այլևս համահունչ չեն իրականությունում առկա իրավահարաբերությունների բնույթին և էությանը: Թեև օրենքն ու հաշմանդամների զբաղվածության ոլորտը կարգավորող հոդվածները ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների, այնուհանդերձ, հաշմանդամությանն առնչվող առանձին հիմնախնդիրներ չեն ստացել իրենց լուծումը: Ավելին, հաշմանդամության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունում առկա են այնպիսի հակասություններ և բացեր, որոնք զգալիորեն նվազեցնում են իրավակիրառման արդյունավետությունը: Պետք է ընդգծել, որ ՀՀ օրենսդրության կիրառման արդյունավետության վրա բացասական ազդեցություն ունի նաև այն փաստը, որ բացակայում են դրանց իրացման՝ հատկապես նյութական երաշխիքները: Օբյեկտիվորեն առաջացել է նոր օրենքի մշակման և ընդունման անհրաժեշտություն: Ներկայումս քայլեր են ձեռնարկվում նշված ոլորտի օրենսդրությունը ՀՀ միջազգային կոնվենցիոն պարտավորություններին համապատասխանեցնելու համար: Այդ նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի

նախագիծը: Ըստ նախագծի հեղինակների՝ նոր իրավակարգավորումները կնպաստեն սոցիալական պաշտպանության գաղափարից անցում կատարել դեպի ներառման մոդելը, միաժամանակ, որպես առաջնային և հիմնարար արժեք ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության հարգումը [4]: Ի տարբերություն հաշմանդամության բժշկական մոդելի, սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին և ներուժին: Ավելին, այս մոդելը կոչ է անում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի զարգացման գործընթացներին:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առաջնային և կարևոր մասնակցություն ունենան իրենց խնդիրների լուծմանն ուղղված օրենքների, քաղաքականությունների, ռազմավարությունների և գործընթացների մշակմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը: Սոցիալական մոտեցման դեպքում հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակը բարելավելու գործողություններն ուղղված են բոլոր այն ներքին ու արտաքին խոչընդոտների վերացմանը, որոնք խանգարում են հասարակության կյանքին նրանց ներգրավմանը: Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք [7; 9]:

Այսպիսով, սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային և վերաբերմունքի, արգելքների/խոչընդոտների փոխազդեցության հետևանք: Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացմանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը: Ինչպես ՀՈՒԱԻԿ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան այնպես էլ Անձի բազմակողմանի գնահատման՝ ֆունկցիաների միջազգային դասակարգումը (հետապու՝ ՖՄԴ) ընդգծել են շրջակա միջավայրի օժանդակող և խաթարող դերակատարությունը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական կյանքում [3;6]:

ԳՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խոսքը ներառման մասին Է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում. Եր.: © ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012:
2. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014թ.-ի ապրիլի 13-ի N370-Ն հրամանով):
3. «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված:
4. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք, 2005:
5. «Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին» 1989թ.:
6. ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն) <http://edu.am/index.php/am/about/view/107>
7. Հայեցակարգ՝ Անձի բազմակողմանի գնահատման՝ առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման Հավելված N 1 ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 9-ի նիստի N 1 արձանագրային որոշման:
8. Ներառական կրթություն. ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. Եր.: «Հուլիսի կամուրջ ՀԿ, 2015, 200 էջ:
9. <http://edu.am/index.php/am/about/view/107>
10. <https://www.aravot.am/2015/02/12/541544/>,

**ИССЛЕДОВАНИЕ ПРИМЕНЕНИЯ КРИТЕРИЙ
МЕЖДУНАРОДНОЙ КЛАССИФИКАЦИИ
ФУНКЦИОНАЛЬНОСТИ ИНВАЛИДНОСТИ И ЗДОРОВЬЯ В
ПРОЦЕССЕ ОЦЕНКИ**

А. Асланян

Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна

АННОТАЦИЯ

В данной статье речь идет, о том что мир уже сегодня признает идею социальной интеграции инвалидов, также принимает их права и стремление к всеобщему равенству. Многие ведущие страны реализуют политику, связанную с проблемами инвалидности, используя социальную модель инвалидности и специфичные для нее инструменты, обеспечивая равные права и доступные условия для лиц с инвалидностью.

Ключевые слова: Международная классификация функциональных возможностей, стандарт, процесс оценки, медико-социальная, жизнедеятельность, социальная неудовлетворенность, инвалидность, экспертиза.

**RESEARCH IN THE APPLICATION OF THE CRITERIA OF
THE INTERNATIONAL CLASSIFICATION OF THE
FUNCTIONALITY OF DISABILITY AND HEALTH IN THE
ASSESSMENT PROCESS**

A. Aslanyan

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

ABSTRACT

In this article we are talking about what the world today recognizes the idea of social inclusion of people with disabilities, it also accepts their rights and the desire for universal equality. Many leading countries are implementing disability-related policies using the social model of disability and its specific tools, ensuring equal rights and accessible conditions for people with disabilities.

Keywords: International classification of functional possibilities, standard, evaluation process, medical-social, vital activity, social dissatisfaction, disability, expertise.

ВЗАИМОСВЯЗЬ МОТИВАЦИИ И ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА ЛИЧНОСТИ НА ПРИМЕРЕ МЕНЕДЖЕРОВ В СФЕРЕ УПРАВЛЕНИЯ

Г.Т. Бархударян¹, А.С. Берберян²

*Российско-Армянский (Славянский) университет
Институт гуманитарных наук (ИГН)
heno.barkhudaryan98@gmail.com, aspsy@inbox.ru*

АННОТАЦИЯ

В данной серии исследования нами было изучено и теоретически обосновано взаимосвязь мотивации “motif”-«побуждение» и эмоционального интеллекта личности на примере менеджеров в сфере управления. Проведен анализ концептуальных подходов эмоционального интеллекта и сущности мотивации менеджеров с помощью опроса респондентов различных групп руководящих личностей.

Ключевые слова: мотивация “motif”-«побуждение», эмоциональный интеллект, личность, менеджер, управления.

Введение

В современном развивающемся рынке труда главным элементом конкурентоспособности компании является ее персонал. Деятельность менеджера напрямую влияет на эффективность деятельности всего персонала, поэтому важное значение имеет умение обеспечивать положительную саморегуляцию управленческой системы. В менеджменте особую роль играет проблема повышения мотивации в процессе управления персоналом, а также влияние эмоционального фактора на мотивацию трудовой деятельности.

Целью исследования данной темы является изучение взаимосвязи мотивации и эмоционального интеллекта личности на примере менеджеров в сфере управления.

Методологическая база: теоретические положения и научные труды таких авторов, как: Д. Гоулман, П. Саловой, Дж. Майер и др.

Анализ литературы дает основание полагать, что существует два подхода к понятию мотивации и пять направлений к улучшению эмоционального интеллекта. Согласно первому подходу, мотивация рассматривается как совокупность факторов или мотивов, а согласно второму – как процесс, механизм. З.З. Хабибулина в профессиограмме менеджера выделяет следующие качества: «Менеджеру необходимы внятная речь, хорошая память, высокая эмоционально-волевая устойчивость, развитые коммуникативные и организаторские способности, готовность к разумному риску» [6].

А.В. Карпов отмечает, что информирование является самостоятельным стимулом для осуществления работы и является своего рода «не директивным консультированием». «Ее цель – устранение негативных последствий от отрицательных результатов работы, не оправдавшихся мотивов, желаний, устремлений и возникающего в силу этого состояния фрустрации» [7]. С.А. Шапиро рассматривает мотивацию трудовой деятельности как процесс удовлетворения работниками своих потребностей и ожиданий в выбранной ими работе, осуществляемый в результате реализации их целей, согласованных с целями и задачами предприятия, и, одновременно с этим, как комплекс мер, применяемых со стороны субъекта управления для повышения эффективности труда работников [8, с. 4].

